

Հարգելի գործընկերներ

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված և 2017 թվականի դեկտեմբերի 27-ին ուժի մեջ մտած «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-236-Ն օրենքի Հոդված 1-ով սահմանվել է քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության հետևյալ նոր տեսակները.

1. Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների),
2. Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների):

Վերոնշյալ ՀՕ-236-Ն Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 17-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան տրված լիցենզիաները շարունակում են մնալ ուժի մեջ մինչև «Ճարտարապետական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով «Հայաստանի Հանրապետության ճարտարապետների պալատ» ինքնակարգավորվող ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցման օրվան հաջորդող վեցերորդ ամիսը լրանալը: Նախկինում տրված լիցենզիաների գործողությունը դադարում է սույն հոդվածով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող օրվանից:»:

«Հայաստանի Հանրապետության ճարտարապետների պալատ» ինքնակարգավորվող ոչ առևտրային կազմակերպությունը պետական գրանցում ստացել է 2018 թվականի մայիսի 15-ին և «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» գործունեության տեսակի լիցենզիաների գործողությունը դադարել է 2018 թվականի նոյեմբերի 16-ից:

Սակայն 2019 թվականի հունիսի 19-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված ՀՕ-82-Ն Օրենքի 1-ին հոդվածով խմբագրվել է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-236-Ն օրենքի 2-րդ հոդվածը, որի համաձայն՝ «Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 17-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան տրված լիցենզիաները գործում են մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Նախկինում տրված լիցենզիաների գործողությունը դադարում է սույն հոդվածով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող օրվանից:» Հետևաբար 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ ուժը կորցրած են ճանաչվել նախկին «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» գործունեության տեսակի լիցենզիաները:

Կառուցապատման նպատակով շինարարության թույլտվություններ տրամադրելիս պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկում ենք ղեկավարվել

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով: Համաձայն որի կառուցապատողը նախագծային փաստաթղթերի (քաղաքաշինական փաստաթղթերի) համաձայնեցման և միաժամանակ շինարարության թույլտվության ստացման նպատակով պետք է դիմի իրավասու մարմին՝ կցելով շինարարության թույլտվության տեղական տուրքը վճարելու մասին անդորրագիրը (անդորրագրերը), նախագծային փաստաթղթերը, փորձաքննության դրական եզրակացությունը (եզրակացությունները) կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նախագծային աշխատանքների կապալառուի գրավոր երաշխավորագիրը:

Կառուցապատման նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրվող շինարարության (քանդման) թույլտվությունների տրամադրման համար հիմք հանդիսացող քաղաքաշինական փաստաթղթերը մինչև դրանց՝ սահմանված կարգով համաձայնեցումն ու հաստատումը, ենթակա են փորձաքննության: Բացառություն են կազմում ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 4 հավելվածի N 1 և N 2 ցանկերով սահմանված՝ ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիա) և միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիա) դասակարգում ունեցող օբյեկտների նախագծային փաստաթղթերը:

Եթե կառուցապատողը տեղական ինքնակառավարման մարմին կառուցապատման նպատակով ներկայացրել է քաղաքաշինական փաստաթղթեր, որոնցում առկա է միայն ճարտարապետական մասը կամ կոնստրուկտորական մասը (կամ երկուսը միասին), ապա սահմանված դեպքերում և կարգով բավարար է ներկայացնել նրանց վերաբերյալ դրական փորձաքննության եզրակացությունը: Ուստի «Ճարտարապետական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն ճարտարապետների պալատի կողմից տրվող արտոնագրի առկայությունը կամ բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ շինարարության թույլտվության տրման կամ մերժման համար:

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 17-րդ հոդվածը՝ քաղաքաշինական փաստաթղթերը հանդիսանում են քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման միջոց: «Լիցենզավորման մասին» օրենքի դրույթների համաձայն իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը քաղաքաշինական փաստաթղթերի կազմման և փորձաքննության համար պարտավոր են ունենալ նշված գործունեության իրականացման համապատասխան լիցենզիա: Սակայն վերոնշյալ փոփոխություններով պայմանավորված լիցենզավորման ենթակա են միայն ինժեներական բաժինները, իսկ քաղաքաշինական փաստաթղթերի ճարտարապետական և կոնստրուկտորական մասերը համարվում են ոչ լիցենզավորված գործունեություն:

Ի կատարումն 2017 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-236-Ն օրենքի պահանջների՝ ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1533-Ն որոշմամբ սահմանվել է քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման և քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության գործունեությունների լիցենզիա ու լիցենզիային կից համապատասխան ներդիր ստանալու համար իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին ներկայացվող պահանջներն ու պայմանները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ քաղաքաշինության բնագավառում գործող լիցենզավորված կազմակերպությունների ցանկը և նիստերի արդյունքում ցանկում տեղի ունեցող փոփոխություններն եռամսյակային կտրվածքով տեղադրվում են

ՀՀ քաղաքաշինության
(<http://www.mud.am/am/info/licenzcank>):

կոմիտեի

պաշտոնական

կայքում